

3789

2P. Рицквигссе.

Рицквигссе.

Бум 8/1915/26 бр.

1915

891.99

P - 20



19 NOV 2011

891.99

P-20

Ք Ե Ր Ի Ւ

ՊՕԵՄԱ

ՀԱՅ ՖԻԴԱՅՆԵՐԻ


ԿԵԱՆՔԻՑ

85  
34/196  
ՀՅԼ

Աժամասիրութիւն

ՄՆԱՅԱԿԱՆ ԹԱՄՐԱԶԵԱՆԻ

ՀՅԼ




Տպարան «Շ Ի Ր Ա Կ» Ալէքսանդրապոլ

1015

ՀՅԼ

17.04.2013



34196+

ՅԱՎՀԱՆՆԵԼՈՒԹՅԱՆ ԶԵՂՈՎՐԾՈՒՅՆ

(Փ լ ս մ)

**Սիրելի Յովհաննէս**

Հեռու ես, շա's հեռու մեզանից, որ  
քիրմիդ վրայ արձան կանգնեցնէի: Այս  
պիոֆիկ գրքոյիը, որ նւիրում եմ քն անմոռաց  
յիշատակիդ, բող լինի մի յուշարձան քն  
անւանը: Գու, որ հեռու վայրերում ընկար  
քն հարազատ տանկահայ եղբայրներիդ ա-  
զատոքեան համար, արժանի ես, որ քեզ  
յիշեն:

**Քո հարազատ եղբայրդ**

**ՄՆԱՑԱԿԱՆ ԹԱՄՐԱԶԵԱՆ**

Յ. Բագրատ

1915 Հունվարի 15

## Պ Օ Լ Մ Ը

ՀԱՅ ՖԻԴԱՅՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

I.

Ժ Ե Ա Շ.

Մութը տիրել էր աշխարհը արար,  
Երկինքն ամպամած, ոչ մի աստղ չկար,  
Չկար երկնային պայծառ թագուհին,  
Որ լուսաւորէր քնած աշխարհին:  
Մի կողմից կաթ-կաթ անձրև էր մաղում,  
Այրի կնոջ պէս կարծես արտասւում,  
Ամպերի գոռոց, կայծակի ճայթիւն,  
Ահից փախչում են մարդիկ դէպի տուն:  
Դրսումն էլ չկայ թռչուն, անասուն,  
Վաղուց են նրանք մտել իրենց բուն,  
Խոր-խոր ձորերից գետեր, գետակներ,  
Սրբնթաց հոսում երգելով ողբեր:

Դարեւոր անտառն՝ հսկայ ծառերով,  
Անցնող ճամբորդին ընդունում սիրով,  
Լուռ էր բնութիւն, լուռ էր ամեն ինչ,  
Սև քողով ծածկւած պարզ երկինքը ջինջ:  
Ահա այսպիսի մի մութ գիշեր էր,  
Երբ գնում էին մեր հայ հայդուկներ,  
Արհամարհելով բոնակալ տաճկին,  
Նրանք գնում են դէպ արշալոյսին:

II.

Վիշապաձորի քարայրի խորքում,  
Մեր հայդուկները դադար են առնում,  
Քեռու չորս կողմը հերթով նստեցին,  
Հանգստից յետոյ, խորհուրդ կազմեցին:  
...Ո՞վ կը վստահէր թշւառին ձնշէր.  
Կամ ունեցածը՝ խլել, թալանել.  
Քեռին էր խեղճի տէր ու տիրական  
Իւր ընկերներով երդուեալ պահապան:  
Նա երկիւղ չունէր բինբաշիներից,  
Եւ նրանց անմիտ սպառնալիքից,  
Թէև սուլթանը տւեց հրաման,

Որ քենու գլխին հազար լիրա տան...  
«Ով բերէ նրա գանգը թանկագին,  
Կըստանայ անշուշտ հազար հատ ոսկին,  
Թող այդ գեաւուրի անունը կորչի,  
Եւ նրա կեանքի կրակը մարի:  
«Ով որ սուլթանի թախտը կը սիրէ,  
Թող Քեռու գլուխը Ստամբուլ բերէ,  
Ստանայ պարգև ընծայ զանազան,  
Ես մի ազատւեմ հերիք է, աման...»

III.

Գիշերը արդէն անցել էր կիսից,  
Տղերքը չէին պրծել խորհրդից.  
Ընկերներ՝ բոլորը Քեռու շուրջը նստած,  
Միայն մէկն հեռու՝ զէնք ձեռքին կանգնած:  
Նա հերթապահ էր աշալուրջ, արի,  
Անխոնջ հսկիչը իր ընկերների,  
Քարայրի դռանը եթևեկում էր,  
Հրացանը ձեռքին զգոյշ հսկում էր,  
Երբ ընկերական ժողովը վերջացաւ,  
Քեռին տեղիցը իսկոյն վեր թռաւ,

„Տուրբախ, ձիդ թամբքիր, գէնքերդ կապիր  
 „Դէս կապոյտ բերդը արագ շտապիր,  
 „Նավը ուղ ու Որսորդ, Արաբօ, Կայծակ,  
 „Թուք էլ վերցրէք ձեր գէնքերն արագ,  
 „Անվեհեր Տուրբախի հետ մէկ տեղ գնացէք,  
 „Դէն, քաջեր անվախ առաջ ոլացէք,  
 „Որսորդ, դու երգիր, քու երգդ սիրուն,  
 „Քեռին քեզ մատաղ ու քու արևուն:

Որսորդի երգը

- 1) Ես թողեցի չութ ու գութան,  
 Զեռքս առայ սուր, հրացան,  
 Ընկայ սարեր, խոր անտառներ,  
 Թափառական, բայց՝ անվեհեր:
- 2) Ինչիս է պէտք չութ ու գութան:  
 Իմ հայրենի օջախ վաթան,  
 Աւեր, կրակ միշտ սուգ ու լաց,  
 Քրդի ձեռքից էրւած, սոված...  
 „Դէն, տղերք՝ նստէք ձիերդ առաջ  
 „Դէս գիշերից շատ է անցկացած.  
 „Գնացէք քանի լոյսը չի բացւել,  
 „Տեսէք, կոիւը որտեղ է կանգնել:

Քեռին տղերանց ճակատն համբուրեց,  
 Պատւէրներ տալով ճանապարհ գցեց:  
 „Ուսուլ-էրմանին ալանին դու տար,  
 „Կարօյի տանը թող առափ դադար,  
 „Թող մի քանի օր լաւ հանգստանայ,  
 „Այնուհետև թող գայ մեզ հետ միանայ:  
 „Առ այս նամակը մեր Դժոխքին տար,  
 „Բարեներ ինձնից, ջերմաջերմ համբոյր,  
 „Ես, Արամայիս, Կաբօն, Զանլաթը ճարպիկ,  
 „Որ ընկերերիս մէջն է մի հատիկ,  
 „Կը մնանք այստեղ մի օր, մի գիշեր,  
 „Որ Մշու դաշտից ստանանք լուրեր:  
 „Մեր քուրդ Բաքոյի օրն է գալու,  
 „Պատւէր եմ տւել՝ մեզ հոս գտնելու:

IV.

Ուսուլ-էրմանին Ասլանին տարաւ,  
 Անտառի խորքից ճանապար գտահւ,  
 Նրանք գնացին մթութեան միջից,  
 Զէին վախենում քրդի սարսափից,

— 12 —

Ուսուն ընկել էր մտքի ովկեան,  
Մոոցել էր կածես կինն ու երեխան:

V.

Արամայիսն ու Կարօն եափունչիք առան,  
Քարը բարձ արած հանգիստ պառկեցան,  
Քեռին ու Զանլաթ վիճում էին խիստ  
Հարց ու պատասխան – աաք ու անհանգիստ:  
Քեռի, այդ քրդին ուր ես հաւատում,  
Ու սուրհանդակի գեր նրան յանձնում,  
Զկայ, հայ «վալատ» որ նա լուր տանէր,  
Եւ ուր որ պէտք էր նրա հետ տեսնւէր:  
– Ես նրան գիտեմ շատ տարի առաջ,  
Խօսեց քաջ Քեռին քաշելով հառաչ:  
Քեռին պատմում էր շատ հետաքրքիր  
Քրդերի կեանքից արկածներ ընտիր,  
Նա Բաքոյի հետ շատ դործ էր արել,  
Եւ իւր եղօրից առաւել սիրել:  
Հենց այդ միջոցին մի շան ձայն լուեց  
Քեռին մատները բերանլ դրեց  
Սուլելով յայտնեց խօսքի մի նշան,

Որ երկիւղ, վատանգ այլես չկան:  
Ծառերի միջից գուրս եկաւ Բաքոն  
Եւ նրա ընկեր սատանայ Սաքոն,  
Մօտեցաւ Քեռուն, խոր գլուխ տւեց  
Զանկապի միջից մի ծրար հանեց,  
Եւ այդ ծրարը Քեռուն նա յանձնեց,  
Գաղտնի նշանով մի տեսակ խօսեց:  
Քեռին ծրարը բացեց ու կարդաց,  
Մի փոքրիկ ժպիտ դէմքին երեաց.  
— Տղերք Բաքոյին մի օղի տւէք,  
Սաքոյին նոյնպէս լաւ կերակրէք:

VII.

«Այս գիշեր պէտք է ճանապարհ գնանք,  
» Կապոյտ բերդի մէջ պիտ հանգստանանք,  
» Տուրբախը այնտեղ իւր ընկերներով  
» Մեղ է սպասում ընկեր-քաջերով  
» Բոլորս մի տեղ պէտք է հաւաքւենք,  
» Ինչ անելու ենք, պիտ անվախ անենք  
» Հերիք է թուրքին մենք շինք ծռենք,  
» Բարբարոս քրդի դէմ բարե բոնենք,

„Միթէ մեր գլխին փափախ չենք ծածկում,  
 Երբ մեր քուրերին են առևանդում:  
 „Դէս, տղերք, մի քիչ մենք ծովի քուն տանք  
 Որ մի ժամից յետ այստեղից դնանք.  
 Կարօ, ձիերին շատ լաւ կեր կտաս,  
 Իմ արապիս էլ կանես լաւ սպաս:  
 Ահա այդպէս խիստ տեց հրաման,  
 Մեր հերոս Քեռին իւր խմբին համայն.  
 Իսկոյն քնելու թագարէք տեսան  
 Կարգով իրար մօտ նոքա քուն մտան.  
 Միայն կարօն էր արթուն քարայրում,  
 Դրսի վտանգից նա զգոյշ հսկում.  
 Կարօն երգում էր կամաց ցած ձայնով  
 Իւր եարին յիշում սրտի կարօտով,  
 Կարօյի գաղտնիքը չը զիտէր Քեռին,  
 Մարօն էր նրա հոգոյ պաշտելին:  
 Գիշերը երազում նրան էր տեսնում,  
 Եւ նորա համար հալ ու մաշ լինում,  
 Մարօն կարոյին մի թուղթ էր տւել  
 Այդ ծաղկէ փունջը կրծքին էր պահում,  
 Եւ նրա համար երգեր յօրինում:  
 Մի փունջ ծաղիկ էլ հետն էր յանձնել,

VII.

Յանկարծ իւր քնից Քեռին արթնացաւ,  
 „Տղերք, պատրաստւէք“ հրաման տւաւ.  
 Տղերքն ելան կէս քնաթաթախ,  
 Եւ պատրաստւեցին քաջերը անվախ...  
 Զիերը հեծած Քեռուն հետեռում,  
 Բոլորն հարազատ լուռ ու մունջ գնում,  
 Սրարշաւ գնում, գիշերւայ մթին,  
 Իրենց կեանքը յանձնած անողոք բաղդին:  
 Քեռին իր սիրուն Սրաբին հեծած,  
 Իր արշաւանքի ծրագիր գծած,  
 Միշտ զգուշութեամբ առաջ էր գնում,  
 Ճանապարհներին զիրքեր որոշում:  
 Ինչ որ բան զգաց, կարծես սթափւեց,  
 Եւ ընկերներին այսպէս պատվիրեց.—  
 Տղերք, մօտեցանք խնձորանորին,  
 Անհոգ չմնանք այս մութ սարերին:  
 Այստեղ է ապրում Զալալցի Մստօն,  
 Ինչպէս ինձ յայտնեց լրաբեր Բաքոն,  
 Նա պտտում է քսան ընկերով,

Որ կուի ինձ հետ ու շահւի ոսկով,  
Հետեւում է միշտ մեր հայդուկներին,  
Որ թուրք սուլթանի լինի սիրելին,  
Դէն, հրացանհերդ ձեռներդ բոնէք  
Զիերդ մի քիչ ուժեղ չափ տւեք.  
Տղերք մեր կեանքը էժան չծախենք,  
Մեր նպատակին սրբութեամբ հասնենք,  
Ապա քաջութեամբ մեռնենք ու անցնենք,  
Ամբողջ աշխարհում լաւ անուն թողնենք:  
Արդէն ձորիցը ելնելու մօս էր,  
Երբ նկատեցին նոքա մի սուեր,  
Քեռին ձայն տուեց դուրս գալ անատից,  
Որ իզուր չընկնեն քրդի գնդակից:  
Անթիւ գնդակներ սլացան ձորից,  
Սար ու ձոր թնդաց այդ ահեղ ձայնից.  
Մստօն դուրս թռաւ անտառի խորից  
Յառաջ շարժուելով նա ջոկուց խմբից,  
Գոռալով ասաց, — Էյ գեավուր կանգնիր,  
Այժմ իմ ձեռքից էլ չես ազատւիլ,  
Քո գլխի զինը ես պիտի առնեմ,  
Մեր մեծ սուլթանին ընծայ պիտ տանեմ.  
Քեռին զիլ գոռաց, — տղերք, դիրք մտէք,

Համազարկերով գնդակներ թափէք.  
Մեռնել-ապրելու մեր ժամն է այսօր,  
Թող դողա մեզնից թշնամին ստոր.  
Կարկտի նման գնդակ թափեցին,  
Թշնամու խումբը իսկոյն ցրեցին:  
Քեռին գնդակը Մստօյին ուղղեց,  
Մի ակնթարթում ձիուց գլորեց.  
Բոլորը փախան թողին չորս գիակ,  
34/96 Հայդուկների հետ թող չանեն կատակ...  
Դէն, արիք տղերք գնանք մեր գործին,  
Թող լաւ ճանաչեն քաջն հայդուկին.  
Մեր կեանքի արև դեռ նոր է ծագում,  
Դեռ շատ Մստօներ կերթան այդ ճամբով,  
Եւ իմ գլուխը թանգ պիտի ծախեմ,  
Բիւր հազարների մինչև հասցնեմ...

VIII.

Նախշուն աղբիւրին երբ որ մօտեցան,  
Զիերից իջան քիչ հանգստացան,  
Իրիկւայ մթին կապոյտ բերդ հասան,  
Ընկեր Տուրբախից հիւրասիրեցան.



Անկեղծ համբոյրներ և անկեղծ զգւանք,  
 Փոխադարձ սիրոյ շոյանք գուրգուրանք,  
 Զիանքը տարան մի տեղ կապեցին,  
 Որսորդին այնտեղ պահակ կարգեցին.  
 Դեռ ճանապարհին պատիրեց Քեռին,  
 Լոեն, չպատմեն այդ անցքի մասին.  
 Բայց թէ Տուրբախը կարծես թէ զգաց,  
 Ուստի և տեղ Քեռուն մի կարճ հարց.  
 —Ինչու ուշացաք, ում հանդիպեցիք,  
 Որ դուք այսպէս ուշ մթին մնացիք,  
 Կերկի ձեզ հետ դէպք է պատահել,  
 Ելի մի քանի քուրդ էք գլորել,  
 Ինչ էլ որ լինի, տղերք ջան, նստէք,  
 Իմ այս պալատում լաւ հանգստացէք,  
 Ազատ է այստեղ, ազատ ամեն ինչ,  
 Սարերի գլխին ուր երկինք է ջինջ:  
 Օղիի շլշլ խուրջինից հանեց,  
 Մի մեծ բաժակով նա քեռուն տւեց,  
 Համեցէք, արծիւ ազատ լեռների  
 Սար ու ձոր անտառ քո ձեռքին գերի,  
 Քեռին սկսեց կատակներ անել  
 Ու լիք բաժակը տամլամազ կոնծել:

Բոլոր տղերքը, մէկ-մէկ խմեցին,  
 Կողք կողքի տւած հանգիստ պառկեցին  
 Քեռին ու Տուրբախ, Զանլաթը անվախ,  
 Խորհրդի նստան հանգիստ ու խաղաղ,  
 Քեռին մի ծրար հանեց գրպանից,  
 Որ ստացել էր նա Մշու դաշտից,  
 Շատ ցածր ձայնով ձայրէ ձայր կարդաց,  
 Ու ընկերներին նա այսպէս ասաց. —  
 — Մենք ժամավաճառ չպէտք է լինենք,  
 Ճենց ճիշտ վաղւանից ճանապարհ ընկնենք,  
 Գնանք Սմբոյի սև այբն էլ կարդանիք,  
 Սամնոյ սարերում քիչ հանգստանանք:

IX.

Ձայն ծպտուն չկար, լուռ էր ամեն տեղ,  
 Միայն Արաքսի խշոցն է անեղ,  
 Եւ նըա հազար լեզւանի բերնից,  
 Ու բիւր մեղմ ձայներ խաւարի միջից,  
 Կարծես մի հազար գլխանի վիշապ,  
 Սողալով կանցնի ձորից տափէ տափ,  
 Անթիւ քարերով կայծակի նման,

Շանթում քարերին ծերուկը լալկան,  
Մէկ օձի նման կծիկ է դառնում,  
Մէկ էլ շանթահար կատաղած փախչում,  
Մէկ խոր յատակում աւազ ես տեսնում,  
Մէկ էլ լեռնաչափ փրփուր է դիզում,  
Պառյտ է տալիս որպէս մի անիւ,  
Ծալքերը հազար, հազար են անթիւ,  
Դարաւոր ծերը հազար կեանք ջահել.  
Այդ պառյաների խորքումն էր առել,  
Խշալով յառաջ գնում դէպի ծով,  
Իւր կեանքն էլ այդպէս կորչում դարերով։

X.

Մութ ու խաւար մի գիշեր,  
Կայծակ կրակ էր սարեր,  
Գնդակների տարափից,  
Դուրս չեն գալիս տներից,  
Գիւղում չկայ ջահէներ,  
Թռել անցել են սարեր,  
Սարի գլխին հաւաքւած,  
Տաք կոիւ էր սկսած,

Կոիւ պատւի նամուսի...  
Առեանգում հայ կուսի,  
Գուլոյին են փախցնում,  
Ամքոյ բէկին կին տանում,  
Մեզ լուսաղէմ սարերում,  
Գնդակներ են վզվզում։  
Կարօն, Յարօն, դուրս թռած,  
Քրդերի դէմ կուրծք տւած,  
Ուզում են պատւով մեռնել,  
Կամ քրոջը ազատել։  
Հարիւրաւոր քիւրդ զինւած,  
Կարօյենց տուն պաշարած,  
Խոտի դեզեր վառեցին,  
Տուն ու տեղը քանդեցին,  
Գուլոյենց տան սուգ ու լաց,  
Նրա մայլը պառաւած,  
Գլխին մի մազ չժողեց,  
Իր ձեռքերով նա փետեց,  
Էլ Ամքոյին աղաչանք,  
Դին ու հաւատ հայհոյանք,  
Ամքոն տարաւ Գուլոյին,  
Ու սպանեց կարոյին։

Թէ տղամարդ ես՝ դուրս ել մեր գիմաց  
 Հայը սարուկ չէ, դէմդ է կանգնած,  
 Բաւ է խեղճ հային անես դու թալան,  
 Տղէրք. քարուքանդ արէք այս վրան:  
 Կարկտի նման կրակ թափեցին,  
 Սմքոյին նրանք գետին փռեցին,  
 Ել չկար նաշխուն վրանը սիրուն,  
 Ել չկար հայի մէծ արիւնարբուն,  
 Գուլոն ազատ, ազատ էր Սմքոյից,  
 Այն արիւնարբու անխիղճ գազանից.  
 Գուլոյին տարան մօրը յանձնեցին,  
 Տղէրքը դէպի Սասուն գնացին:

---

Արկը պայծառ  
 Հողմածուփ անտառ  
 Սասոյ սարերում,  
 Նոր կեանք է տիրում:  
 Այնտեղ Մուրատ ֆէդային,  
 Ճացեց Սամոյ հայ ողին. .  
 Ստրուկ կեանքը նա տտեց,  
 Ազատութիւն խրատեց...  
 Սուր և գրիչ միատեղ,  
 Նա շրջում էր գիւղից գեղ.  
 Խօսում բարձր և վսեմ,  
 Արիւնոռուշտ թուրքի դէմ:  
 Խօսում առաջ շարժւում,  
 Հետն էլ զէնքի վարժւում:  
 Սասոյ քաջերին,  
 Հայ կարիչներին,  
 Հերոսի պէս ման գալիս,  
 Խրախուսում սիրտ տալիս:

Յ Ա Խ Ե Լ Ի Ա Ծ

ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Խ Օ Յ Ի Ն

Ախալեր, ճամբէդ թիփի-բորան՝

Ուր ես գնում էս վախտին,

Էս կողմէրս է արան-դարան,

Քեզ մի յանձնիր կոյր բախտին:

Քեզ պէս ճամբորդ շատ են անցել,

Էս օրերին ցուրտ ձմրան,

Բայց նրանցից հէջ չեն դարձել

Հեռու երկրում անյայտ կորել:

Գիտեմ եարիտ վառւած սիրով

Ուզում ես շուտ գեղ հասնես.

Շտապում ես հե հեաւով,

Ու մուրազիդ շուտ հասնես:

Բայց ճամբէդ է թիփի-բորան,

Ուր ես գնում էս վախտին.

Էս կողմէրը արան-դարան,

Քեզ մի յանձնիր կոյր բախտին:

Ա Շ Ո Ւ Կ Դ

Աշուղ ջան ինչ ես քո կրծքին դրել

Սազդ գեղեցիկ, թելերն էլ լարել,

Մէրի ու սաւդի երգն ես երգում,

Մեր ջահելների սրտերը այրում:

Ի՞նչ ես սևաչեայ կամար ունքերով,

Աղջկայ սէրը սազիդ միջոցով

Աղապ տղերանց սրտի մէջ վառում,

Սարի պէս տղոց գերի դարձնում:

Ի՞նչ ես մոռացել մեր երկրագործին,

Գութանի մաճկալ, քաղւոր կարիճին,

Զէ որ ծովի պէս քրտինք են թափում,

Նրանց աշխատանքն է մեզ կերակրում:

Յիշիր քարտաշի տանջանք, աշխատանք,

Որմնազիրների թափած ճիդ ու ջանք,

Մեզ համար շինած տաճար գիտութեան

Սուրբ եկեղեցիք մեղքի քաւութեան:

Մի մսուանար հանճարեղ նկարչի վրձին,  
Եւ աշխատասէր հիւսնի սուր կացին,  
Գեղեցկին պաշտող պօէտին զովիր  
Եւ այդ բոլորին պսակներ հիւսիր:

Երգիր սիրոյ հետ և սուրբ աշխատանք,  
Նրա մէջ միայն կայ երջանիկ կեանք,  
Միայն մի երգիր ալ թուշ ու ալ վարդ,  
Աշխատանքն է կեանքի միշտ առաջին վարդ:

---

Ծ Ի Ծ Ե Բ Ն Ա Կ

Սիրուն ծիծեռնակ ի՞նչ ես լուռ նստել,  
Կարծես քո հաւատդ էլ է խորտակւել,  
Ի՞նչու քո բունը փշով շինեցիր,  
Ու նրա մէջը դու բանտարկւեցիր:

Ես քեզ տեսել եմ մի ուրիշ տեղում,  
Բուն էիր շինում ծածկի արանքում,  
Ու քո ծագերիդ, այնտեղ ապահով,  
Մթնացնում էիր սիրոյ գգւանքով:

Իսկ այսօր հոգիդ դառն, վրդովւած  
Սգում, լալիս ես քո փառքը անցած,  
Քեզ համար չկայ ծառ, ծաղիկ, գարուն,  
Մինչև չփոխես քո այդ փշեայ բուն:

---

Ի Մ Յ Ո Յ Ա Ը

Աշխարհս լայն, իմ տեղս նեղ,  
Աղքատութեան ծովում ահեղ,  
Լող եմ տալիս օր ու գիշեր,  
Ու չեմ հասնում ափը անձէր։

Ալիքները ծալք-ծալք դալիս,  
Հարւածներ են կրծքիս տալիս.  
Բայց ես էլի ուժեղ թափով,  
Ցրում նրանց իմ թեերով։

Յոյսս անմար լապտերի պէս,  
Չի հեռանում տանջւած սրտէս,  
Ամեն օր ես ափն եմ նայում,  
Աղատութեան օր երազում։

Ա Զ Ն Ի Ի Լ Ն Կ Ե Ր

Աղնիւ ընկեր մի՛ վհատիր,  
Դու գործիդ մէջ արի՛ եղիր.  
Մի՛ ընկճակիր սարկօրէն  
Որ թշնամիք քեզ չծաղրեն։

Գործն է մարդուն կեանք տւողը...  
Այս աշխարհի մէջ ապրողը  
Իր վաստակը պիտի ուտի,  
Որ ուրիշն բեռ չլինի։

Սիրտդ լինի պարզ ու յատակ  
Նման անուշ մի աղբերակ  
Հոգիդ պայծառ ինչպէս վտակ  
Կարկաչանոս ու անուշակ։

11. 12. 13. 14.  
15. 16. 17. 18.  
19. 20. 21. 22.  
23. 24. 25. 26.  
27. 28. 29. 30.

11. 12. 13. 14.  
15. 16. 17. 18.  
19. 20. 21. 22.  
23. 24. 25. 26.  
27. 28. 29. 30.

11. 12. 13. 14.  
15. 16. 17. 18.  
19. 20. 21. 22.  
23. 24. 25. 26.  
27. 28. 29. 30.

ՀՀ Ազգային գրադարան



NL0331737

30803